Երկու հեղուկ բաղադրիչների՝ պոլիուրիանիզացիոնատի միջև ստեղծվող ռեակցիայի արդյունքում էլ ստացվում է փրփրապոլիուրեթան: Ջրի հետ շփումը հանգեցնում է խառնուրդի փրփրեցմանը [111]:

Պոլիոլը քիմիական միացություն է, որը ստացվում է ստիրոլի պատրաստի համապոլիմերի և սովորական պոլիէթերի դիսպերսիայից: Պոլիոլը իրենից ներկայացնում է հիդրօքսիլ պարունակող հեղուկ, որի բաղադրության մեջ մտնում են տարբեր միացություններ՝ էմուլգատորներ, պոլիէթերներ, ռեագենտներ, որոնց շնորհիվ էլ տեղի է ունենում փրփրացում: Պոլիոլների գունային սպեկտրը հիմնականում լինում է բաց դեղինից մինչև մուգ շագանակագույն:

Ամուր փրփրապոլիմերեթան ստանալու համար գոյություն ունի փրփրացնող տարրերի կիրառման երկու եղանակ: Առաջին տարբերակում փրփրացնող տարր է հանդիսանում CO₂-ը, որն առաջանում է ջրի և իզոցիանատի համատեղ ռեակցիայից: Երկրորդ եղանակի դեպքում փրփրացնող տարրեր են հանդիսանում CO₂-ը և ֆիզիկական փրփրեցնողը, ինչն իրենից ներկայացնում է եռման ցածր ջերմաստիճան ունեցող հեղուկ, որը գոլորշիանում է իզոցիանատի և պոլիոլի ռեակցիայից անջատված ջերմությունից: Բացի դրանից պոլիոլը հնարավորություն է տալիս կարգավորել փրփրապոլիմերեթանի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Վերջերս օգոնի շերտի պահպանման վերաբերյալ միջազգային համաձայնագրի շրջանակներում որպես փրփրացնող կիրառվող քլորաֆտորածխաջրածիսները փոխարինվեցին օգոնի համար անվտանգ ծխաջրածիսներով (պենտան, ցիկլոպենտան և այլն): Քիմիական արտադրության մեջ պոլիոլը կիրառվում է նոր սերնդի փրփրապոլիմերեթանների արտադրության մեջ որպես հավելանյութ: Պոլիոլը հնարավորություն է տալիս զգալիորեն բարձրացնել ստացված արտադրանքի կրողունակությունը և

ճ կ ու ն ու թ յ ու ն ը , դ ր ա վ ե ր ա մ շ ա կ մ ա ն տ Ե խ ն ո լ ո գ ի ա յ ի
ո ր ա կ ը ի ն չ ա Ե ս ն ա ն Ե ր կ ա ր ա ց ն Ե լ շ ա հ ա գ ո ր ծ մ ա ն
Ժ ա մ ա ն ա կ ը :

Ս ի լ ի կ ա տ ա յ ի ն խ Ե Ժ Ե ր - Ս ի լ ի կ ա տ ա յ ի ն
ն Ե ր ա ր կ վ ո ղ խ Ե Ժ Ե ր ը ի ր Ե ն ց ի ց ն Ե ր կ ա յ ա ց ն ու մ Ե ն
Ե ր կ ու Բ ա ղ ա դ ր ի չ ն Ե ր ի ց կ ա գ մ վ ա ծ հ ա մ ա կ ա ր գ Ե ր ,
ո ր ո ն ք խ ա ռ ն վ ա ծ Ե ն մ ի մ յ ա ն ց հ Ե տ 1: 1
հ ա ր ա Բ Ե ր ու թ յ ա մ Բ : Ք ա ն ի ո ր ա յ ս խ Ե Ժ Ե ր ի հ ի մ ք ը
ս ի լ ի կ ա տ ա յ ի ն Ե , ն ր ա ն ք չ ո ր ա ց մ ա ն Ժ ա մ ա ն ա կ
Ժ ա վ ա լ ա յ ի ն փ ո փ ո խ ու թ յ ու ն ն Ե ր չ Ե ն ու ն Ե ն ու մ ,
մ ի մ յ ա ն ց հ Ե տ ռ Ե ա կ ց ի ա յ ի մ Ե ջ Ե ն մ տ ն ու մ շ ա տ ա ր ա գ
և ու ն Ե ն Բ ա ր ծ ր ա մ ր ու թ յ ու ն : Ծ ա տ Ժ ա մ ա ն ա կ
ն Ե ր ա ր կ վ ո ղ ս ի լ ի կ ա տ ա յ ի ն խ Ե Ժ Ե ր ը կ ի ր ա ռ վ ու մ Ե ն
մ ի ն Ե ր ա լ ա յ ի ն ն յ ու թ Ե ր ի (ց Ե մ Ե ն տ կ ա մ ն Ե ր ա ր կ վ ո ղ
մ ի կ ր ո ց Ե մ Ե ն տ) հ Ե տ հ ա մ ա տ Ե ղ :

Յ ա մ Ե մ ա տ ա ծ ա յ լ ջ ր ա մ Ե կ ու ս ա ց մ ա ն Ե ղ ա ն ա կ ն Ե ր ի
հ Ե տ` ն Ե ր ա ր կ վ ո ղ ջ ր ա մ Ե կ ու ս ա ց մ ա ն
ա ռ ա վ Ե լ ու թ յ ու ն ն Ե ր ն Ե ն .

- վ Ե ր ա ն ո ր ո գ մ ա ն և շ ի ն ա ր ա ր ու թ յ ա ն Ժ ա մ ա ն ա կ
ա ն հ ր ա ժ Ե շ տ ու թ յ ու ն չ կ ա դ ա դ ա ր ա ց ն Ե լ օ Բ յ Ե կ տ ի
ա շ խ ա տ ա ն ք ը ,
- տ վ յ ա լ Ե ղ ա ն ա կ ը կ ա ր Ե լ ի Ե կ ի ր ա ռ Ե լ տ Ե ղ ա յ ն ա կ ա ն ,
- ա շ խ ա տ ա տ ա ր ու թ յ ա ն և ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ա ռ ու մ ո վ
տ ն տ Ե ս ա պ Ե ս շ ա հ ա վ Ե տ Ե ն ,
- հ ո ղ ա յ ի ն ա շ խ ա տ ա ն ք ն Ե ր ի ա ն հ ր ա ժ Ե շ տ ու թ յ ու ն
չ կ ա ,
- տ վ յ ա լ ջ ր ա մ Ե կ ու ս ա ց ու մ ը կ ա ր Ե լ ի Ե կ ի ր ա ռ Ե լ
տ ա ր վ ա ց ա ն կ ա ց ա ծ Ե ղ ա ն ա կ ի ,
- ա յ ս Ե ղ ա ն ա կ ը մ ո ն ո լ ի տ Ե` ա ռ ա ն ց կ ա ր Ե ր ի :

Պ ր ա կ տ ի կ շ ի ն ա ր ա ր ու թ յ ա ն մ Ե ջ Ե ր Բ Ե մ ն
ա ն հ ր ա ժ Ե շ տ Ե լ ի ն ու մ ջ ր ա մ Ե կ ու ս ա ց ու մ ն
ի ր ա կ ա ն ա ց ն Ե լ ա յ ն ա Ե ս , ո ր Բ ա ց ա ռ վ ի ց ա ն կ ա ց ա ծ տ ի պ ի
ջ ր ի ն Ե ր թ ա փ ա ն ց ու մ : Ա յ դ պ ի ս ի պ ա հ ա ն ջ ն Ե ր ի ն գ ր Ե թ Ե

ամբողջ ու թյամբ բավարարում են փչովի եղանակով իրականացվող մեմբրանները:


Փչովի եղանակով իրականացվող մեմբրանային շրամեկուսացումը նպատակահարմար է կիրառել առանց դրենաժային համակարգերի կամ որոշակի տեղայնական դրենաժի կիրառմամբ: Առանց դրենաժի շրամեկուսացում հիմնականում իրականացվում է ստորգետնյա այն կառուցվածքներում, որոնք գտնվում են բնակեցված տարածքներում և գրունտային ջրերի անընդհատ դրենաժը կարող է բերել նստվածքների, որն իր հերթին վտանգ է հանդիսանում մոտակայքում գտնվող շենքերի համար [120]:

Կատարյալ անջրաթափանց եղանակի իրականացման դեպքում հնարավոր է գրունտային ջրերի մեծ ճնշում թուլնել այն կառուցվածքի վրա: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ընտրել շրամեկուսացման այնպիսի եղանակ, որը կուսենա բետոնի հետ մեծ ադհեզիա և կկարողանա դիմադրել այդ ճնշումներին: Նմանատիպ կոնստրուկցիաներ ստանալու գործում լայն կիրառություն են ստացել թերթավոր, ինչպես նաև փչովի մեմբրանները որոնք բավականին լավ են հաղթահարում իրենց առջև դրված խնդիրները, բայց իհարկե այս երկու մեմբրաններն էլ ունեն իրենց առավել ությունները և թերությունները [118]:

Պոլիմերային մեմբրանները լայն տարածում են գտել թուլնելների շրամեկուսացման մեջ: Դրանք սինթետիկ ամրաթելերից կազմված թերթեր են, որոնց մակերևույթին կարող են լինել միկրոանցքեր, որոնցով կարող է ներթափանցման օդը, սակայն չի ներթափանցում ջուրը [45]: Այդպիսի թերթերը նաև անվանում են հիդրոխոչընդոտողներ: Փաթթոցային բիտումային նյութերի նկատմամբ նրանց կարևորագույն առավել ությունը կիրառման

պարզ ու թյուր է և հանգույցների
բացակայությունը [40]:

Փշովի մեմբրանները շուկայում դեռևս փոքր
մասնաբաժին են կազմում, սակայն այս եղանակի
կիրառմամբ ջրամեկուսացված թուներկների քանակը
գնալով աճում է: Գոյություն ունեն տարբեր
տեսակի փշովի ջրամեկուսիչ մեմբրաններ, որոնք
ըստարտադրության տեսակի բաժանվում են ռեակտիվ
և ոչ ռեակտիվ համակարգերի. ռեակտիվ են
համարվում այն մեմբրանները, որոնց ամրացումն
իրականացվում է պոլիմերի հետ ռեակցիայի
միջոցով, իսկ ոչ ռեակտիվ է համարվում այն
եղանակը, որի պարագայում ամրացումն
իրականացվում է հիդրատացիայի կամ օդի հետ շփման
միջոցով: Փշվող ջրամեկուսիչ մեմբրանները
հիմնականում պատրաստվում և փշվում են տեղում, 3-4
մմ հաստությամբ հիմնական երեսարկի վրա, որը,
կախված նախագծային առանձնահատկություններից,
հետագայում կա՛մ ծածկվում է երկրորդական
երեսարկով, կա՛մ պաշտպանիչ շերտով: Երբ
մեմբրանը փշվում է հիմնական երեսարկի վրա, իսկ
հետագայում մեմբրանի վրայից իրականացվում է
երկրորդական երեսարկը, այդ դեպքում կցումը
լինում է կրկնակի, քանզի մեմբրանը երկու
կողմերից էլ ամրակցվում է բետոնե երեսարկներին
(Նկ 1.4): Փշելու եղանակով իրականացվող
մեմբրանների առանձնահատկությունը կայանում է
նրան բետոնի կապակցման ամրություն մեջ: Բավարար
ամրությամբ կապակցված մեմբրանները
յուրահատուկ մեխանիկական և ջրամեկուսիչ
հատկություններով են օժտում բետոնին, որն իր
հերթին մեծացնում է երեսարկի
երկարակցությունը [108]:



Նկ.14 Փչ ո վ ի մ ե մ բ բ ա ն ի ի ր ա կ ա ն ա ց մ ա ն կ առ ու ց վ ա ծ ք ը

Փչ ո վ ի մ ե մ բ բ ա ն ն եր ի հ ի մ ն ա կ ա ն թ եր ու թ յ ու ն ը կ ա յ ա ն ու մ է ն ր ա ն ու մ, ո Ր ճ ն շ ու մ ա յ ի ն շ ր եր ի առ կ ա յ ու թ յ ա ն դ ե պ բ ու մ ն ո Ր փ չ վ ա ծ և դ ե ո չ չ ո Ր ա ց ա ծ մ ե մ բ բ ա ն ը կ ա Ր ո Ղ է վ ն ա ս վ ե լ և առ ա ջ ա ն ա լ շ ր ա յ ի ն հ ո ս ք դ ե պ ի թ ու ն ե լ : Ի ս կ պ ո լ ի ու Ր ե թ ա ն ա յ ի ն հ ի մ ք ո վ մ ե մ բ բ ա ն ն եր ի դ ե պ բ ու մ, եր բ բ ե տ ո ն ի մ ա կ եր ն ու յ թ ը չ ո Ր է, ա յ ն ն ա խ ա պ ե ս պ ե տ ք է խ ո ն ա վ ե ց ն ե լ, ո Ր պ ե ս զ ի բ ե տ ո ն ի և մ ե մ բ բ ա ն ի ա մ ր ա կ ց ու մ ը լ ի ն ի ա մ ու Ր, ո Ր ը հ ա վ ե լ յ ա լ ա շ խ ա տ ա ն ք է [98]:

Փչ ո վ ի ե ղ ա ն ա կ ո վ ի ր ա կ ա ն ա ց վ ո ղ մ ե մ բ բ ա ն ն եր ի կ ի ր առ ու թ յ ու ն ը ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց թ ու ն ե լ ա շ ի ն ու թ յ ու ն ու մ մ ե ծ թ ա փ է ս տ ա ն ու մ, օ Ր ի ն ա կ ծ վ ե յ ց ա Ր ի ա յ ի Գ ի ս ու ի լ ք ա ղ ա ք ու մ կ առ ու ց վ ա ծ թ ու ն ե լ ն ի ր ա կ ա ն ա ց վ ե լ է վ ա հ ա ն ա յ ի ն ա ն ց ա հ ա տ մ ա ն ե ղ ա ն ա կ ո վ ա մ ու Ր ժ ա յ ո ա յ ի ն գ Ր ու ն տ ն եր ու մ, մ ե կ շ եր տ տ ո Ր կ Ր ե տ բ ե տ ո ն ա յ ի ն եր ե ս ա Ր կ ո վ : Փչ ո վ ի ե ղ ա ն ա կ ո վ ի ր ա կ ա ն ա ց վ ո ղ մ ե մ բ բ ա ն ի օ գ ն ու թ յ ա մ բ շ ր ա մ ե կ ու ս ա ց վ ե լ է 1900մ² մ ա կ եր ե ս : Ա յ ս թ ու ն ե լ ը պ ա տ կ ա ն ու մ է կ ա տ ա Ր յ ա լ չ ո Ր թ ու ն ե լ ն եր ի շ ա Ր ք ի ն : Տ վ յ ա լ թ ու ն ե լ ի եր ե ս ա Ր կ ի վ Ր ա ա գ դ ո ղ հ ի դ Ր ո ս տ ա տ ի կ ճ ն շ ու մ ը կ ա գ մ ու մ է 50Պ ա ն

այս ճնշման ազդեցություն տակ ոչ մի հատվածից չրի ներթափանցում դեպի թուլնել չի նկատվել (**Նկ.1.5**):




Նկ.1.5 Փչ ովի մեմբրանի կիրառմամբ ջրամեկուսացման օրինակ

Նույն եղանակով ջրամեկուսացված մեկ այլ կառույց է Յոնկոնգում գտնվող «MTRC Tseun Wan» թուլնելը, որի երկարությունը կազմում է 1.75կմ և ունի 19 փոխհատում: Պայմանագրի պահանջներից մեկն այն էր, որ թուլնելը պետք է լիքնի 100% «չոր», իսկ նախագծային առանձնահատկություններից մեկն այն էր, որ ջրամեկուսացման համակարգը պետք է պարունակի բավականին բարդ երկրաչափական ձևեր ունեցող հատվածներ: Ջրամեկուսացումը կատարվեց գետտեքստիլի և փչովի մեմբրանի համատեղ կիրառմամբ: Փոխհատումներում և այն հատվածներում, որտեղ գետտեքստիլի իրականացումը կառաջացներ մեծ բարդություններ, կիրառվեց փչովի մեմբրան: Որպես առաջնային հանգամանք կարելի է նշել այս տիպի մեմբրանների կիրառման տեսանկյունից ճկունությունը: Մետրոյի կայարաններ, թուլնելային փոխհատումներ և այլ բարդ երկրաչափական ձև ունեցող հատվածներ

հեշտուղթյամբ կարող են շրամեկուսացվել փչովի մեմբրանների օգնությամբ: Բետոնի և մեմբրանի կապակցման ամրությունն ընդհանուր առմամբ հավասար է բետոնի երկու շերտերի միմյանց կապակցման ամրությանը՝ ի հաշիվ մեմբրանի բավականին մեծ ադհեզիայի: Կարելի է փաստել, որ մեմբրանն ավելի առաձգական է և նրա Յուլենգի մոդուլն ավելի փոքր է, քան տորկրետինը: Վերջինս ավելի դրական է գնահատվում այնպիսի թունելներում, որոնք գտնվում են համեմատաբար ավելի փխրուն գրունտներում կամ լեռնային մեծ ճնշման հատվածներում, որտեղ նստվածքների հավանականությունը բարձր է:

Համակարգի անջրաթափանցելիությունը կախված է երկու հիմնական բնութագրերից՝ մեմբրանի անջրաթափանցելիությունից և նրա միացումների որակից: Բետոնի և մեմբրանի որակյալ միացման դեպքում նրանց միացման հատվածում գրունտային ջրերի ներթափանցման հնարավորությունը հասցվում է նվազագույնի, քանզի վերացվում են գրունտային ջրերի հնարավոր ճանապարհները՝ բացառելով այդ ջրերի ներթափանցումը թունել: Մեմբրանի և երկրորդական կամ ներքին երեսարկի միջև կապը նույնպես կարող է պատնեշ հանդիսանալ թունել ներթափանցող ջրի համար:



Նկ. 1.6 Փշովի եղանակով իրականացվող մեմբրանը հիմնական և երկրորդական երեսարկների արանքում ինչպես ցույց է տրված **Նկ. 1.6** ում, փշովի եղանակով իրականացվող մեմբրանը երկու կողմից բետոնի հետ միացումների դեպքում ներթափանցող ջրերը պետք է ճանապարհ հարթի երեք արգելապատնեշների միջով. առաջին հերթին, հիմնական երեսարկի միջով, հետո՝ մեմբրանի պատռվածքի (եթե այն առկա է), իսկ վերջում՝ երկրորդական երեսարկի վրա եղած ճաքի միջով: Յարկ է նշել նաև, որ այս ամենը պետք է կատարվի մեկ կետում, քանզի ջրերը չի կարող շարժվել բետոնի և մեմբրանի արանքով:

Վատագույն դեպքում, երբ այդ ամենը տեղի ունի, ջրերը կարող է ներթափանցել թունել մեմբրանի փոքրիկ պատռվածքի միջով: Քանի որ այդ կետը, որի միջով ջրերը ներթափանցում է թունել, պետք է համապատասխանի հիմնական երեսարկի և մեմբրանի վնասվածքներին, ապա բավականին հեշտուղյամբ հնարավոր կլինի վերացնել ներթափանցման այդ աղբյուրը:

Այժմ մեծ տարածում է ստանում ներթափանցող ջրամեկուսացումը, որն ապահովում է բետոնի անջրաթափանցելիությունը՝ ներթափանցելով ծակոտիների մեջ, այնտեղ ստեղծելով

բյուրեղահիդրատներ, որոնք փակում են ծակոտիները՝ ներթափանցող ջրի համար ստեղծելով պատնեշ: Ներթափանցող ջրամեկուսիչները հիմնականում կազմված են լինում պորտլանդցեմենտից, հավելանյութերից և քիմիական ակտիվ կոմպոնենտներից, որոնց միջոցով էլ ստեղծվում են նեոնում բետոնի մեջ ներթափանցումը: Որպես ակտիվ կոմպոնենտներ հիմնականում կիրառվում են հիմնային մետաղների աղեր, ինչպես նաև պոլիմերային հավելանյութեր [21]:

Չնայած այն փաստին, որ այս եղանակը նոր է լայնամասշտաբ կիրառություն ստանում, այն հայտնագործվել է 1952թ. դանիական Vandexը նկերոլթյան կողմից, որը արտադրում էր մանր դիսպերսված ավազացեմենտային խառնուրդ: Այն ջրի հետ խառնելուց և բետոնե կոնստրուկցիային քսելուց հետո ոչ միայն ստեղծում էր արտաքին պաշտպանիչ շերտ, այլ նաև ճաքերի և ծակոտիների միջոցով ներթափանցում էր բետոնի խորքը: Այս եղանակով ոչ միայն նվազում է կոնստրուկցիայի ջրաթափանցելիությունը, այլև հավելյալ ամրություն հաղորդվում բետոնին՝ ծակոտկենություն նվազեցման շնորհիվ [73]:

1.4 Առաջին գլխի եզրակացություններ

Մասնագիտական գրականությունում բերված ուսումնասիրությունները և վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել հետևյալը, որ.

- Բարձր գրունտային ջրերի առկայության դեպքում որակյալ ջրամեկուսացման անհրաժեշտությունը կրկնապատկվում է, քանզի գրունտային ջրերում պարունակվող լուծույթները երբեմն լինում են ագրեսիվ և կարող են լուրջ վնաս հասցնել կոնստրուկցիաներին: Թունեկների ջրամեկուսացման աշխատանքները երկու տիպի

են. առաջին՝ ջրի հավաքում և հեռացում մինչև թունեղ, կառուցվածք հասնելը և երկրորդ՝ թունեղային կառուցվածքի կատարելագործում, որպեսզի տեղի չունենա ջրի ներհոսք թունեղի մեջ:

- Թունեղների ջրամեկուսացումը համալիր գործընթաց է, որի ժամանակ, բացի թունեղային երեսարկի անջրաթափանցելիությունը ապահովելուց, անհրաժեշտ է նաև հավաքել և կազմակերպված կերպով հեռացնել թունեղին հարող գրունտային ջրերը: Կախված թունեղը շրջապատող գրունտներում պարունակվող ջրի քանակից՝ դրենաժներ կարող են իրականացվել տեղայնական կամ թունեղի ամբողջ երկայնքով:
- Վերլուծելով թունեղային երեսարկի ջրամեկուսացման եղանակները, որոնք հիմնականում իրենցից ներկայացնում են երեսարկի տորկրետավորում, փաթթոցային ջրամեկուսիչների սոսնձում, երեսարկի բետոնի մեջ պոլիմերային խառնուրդների ներարկում, փչովի մեմբրանների իրականացում և ներթափանցող ջրամեկուսիչների կիրառում՝ կարելի է եզրակացնել, որ քիմիայի զարգացման հետ գուցա ընթաց կատարելագործվում են ջրամեկուսիչ նյութերը: Ժամանակակից ջրամեկուսիչների կիրառմամբ հնարավոր է դառնում մոտենալ կատարյալ «չոր» թունեղի գաղափարին:

Գ Լ ՈՒ Խ 2.

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՂ ՋՐԱՄԵԿՈՒՍԻՉ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԲԱՂԱԴՐԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՏՈՆԻ ԿԱԿՈՏԻՆԵՐԻ ՎՐԱ

2.1 Բե տո ն ի ծ ա կ ո տ կ ե ն ու թ յ ա ն ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ու ն

Բե տո ն ի ջրաթափանցելիությունը հիմնականում կախված է դրածակոտկենությունից, ինչպես նաև կապակցանյութի և լցանյութերի հատկություններից: Բե տո ն ի ծ ա կ ո տ կ ե ն ու թ յ ու ն կոչվում է բե տո ն ի կառուցվածքում պինդ մասնիկներով չլցված ցանկացած տարածությունը: Բաց անցքերի մասնաբաժնի ավելացումը նվազեցնում է բե տո ն ի երկարակեցությունը և հակառակը, անցքերի մասնաբաժնի նվազեցումը և պայմանական փակ անցքերի մասնաբաժնի ավելացումը հանգեցնում են բե տո ն ի երկարակեցության ավելացմանը: Բաց և պայմանական փակ անցքերը ձևավորում են բե տո ն ի ամբողջական ծակոտկենությունը, ինչի ավելացման արդյունքում նվազում է վերջինիս ամրությունը:

Ներգրաված օդի քանակությունը կախված է բե տո ն ախառնուրդի շարժունությունից: Ծարժունության փոքրացմանը գուցա հետ

Ներգրաված օդի քանակությունը բարձրանում է 4%-ից ավել: Առավել շարժուն խառնուրդներում ներգրաված օդը չի գերազանցում 2%-ը [50]:

Բետոնային խառնուրդի խտացումը միմյանց նկատմամբ պինդ բաղադրիչների առավելագույն մոտեցման գործընթացն է բետոնախառնուրդից գազային, երբեմն՝ նաև ջրային գանգվածի հեռացման հաշվին, որի շնորհիվ ձևավորվում է բետոնի կառուցվածքը:

Բետոնային խառնուրդի խտացման ընթացքում տեղի է ունենում հետևյալը.

1. ներգրավված օդի հեռացում,
2. բաղադրիչների վերադասավորում,
3. գատում (շերտավորում),
4. նստվածքազատում (ներքին ջրազատում):

Ներգրավված օդն ամբողջ ծավալում անցքերի քանսային բաշխվածություն, ինչպես նաև չափերի անկանոնություն հետևանքով, որպես կանոն, հանգեցնում է «ներգրավված օդ»-ի յուրաքանչյուր տոկոսին բաժին ընկնող բետոնի ամրություն նվազմանը 3-5%-ով: Ներգրավված օդը բետոնի կառուցվածքում առաջացնում է համաչափ բաշխված, գրեթե գնդաձև անցքերի համակարգ՝ 50-300մկմ չափերով, ինչը կտրուկ բարձրացնում է բետոնի ցրտադիմացկունությունը:

Նստվածքազատումը ջրի արտամղումն է առավել խիտ բաղադրիչների միջոցով, ծանրության ուժի ազդեցության տակ, ինչի հետևանքով տեղի է ունենում ներքին և մակերևութային ջրազատում, որի արդյունքում առաջանում են նստվածքային անցքեր և միջանցիկ մազանոթներ:

Բարձր խտություն ունեցող լցանյութերով բետոնի ծակոտկենությունը պայմանավորված է հիմնականում ցեմենտաքարի ծակոտկենությամբ, որը քանակապես բնութագրվում է ծավալով, բերված մակերևույթով և ծակոտիների միջին շառավղով: Ծակոտիների առաջացումը տեղի է ունենում անդադար՝ հիդրատացման և կոռոզիոն գործընթացների արդյունքում, ինչի հետևանքով

բ Ե տո ն ի ծ ա կ ո տ կ Ե ն ո ւ թ յ ա ն ք ն ո ւ թ ա գ ռ Ե ռ ը ա ն ը ն դ հ ա տ փ ո փ ո խ վ ո ւ մ Ե ն [89]:

Ծ ա կ ո տ կ Ե ն ո ւ թ յ ո ւ ն ը հ ի մ ն ա կ ա ն ո ւ մ դ ա ս ա կ ա ռ գ վ ո ւ մ Ե ը ս տ չ ա փ ի և ջ ը ի հ Ե տ հ ա ռ ա ք Ե ռ ա կ ց մ ա ն ք ն ո ւ յ թ ի :

Ծ ա կ ո տ ի ն Ե ռ ի չ ա փ ի ց կ ա խ վ ա ծ , տ ա ռ ք Ե ռ ո ւ մ Ե ն .

- o մ ա կ ը ո ա ն ց ք Ե ռ (0,1-0,2 մ մ և ա վ Ե Լ ի),
- o մ Ե գ ո ա ն ց ք Ե ռ ,
- o մ ի կ ը ո ա ն ց ք Ե ռ ,
- o ո ւ Լ տ ռ ա մ ի կ ը ո ա ն ց ք Ե ռ (Ե ն թ ա մ ի կ ը ո ա ն ց ք Ե ռ),
- o գ Ե Լ ա յ ի ն ծ ա կ ո տ ի ն Ե ռ :

Մ ա կ ը ո ա ն ց ք Ե ռ ի ա ռ ա ջ ա ց ո ւ մ ը հ ի մ ն ա կ ա ն ո ւ մ կ ա խ վ ա ծ Ե ջ ը ա ց Ե մ Ե ն տ ա յ ի ն հ ա ռ ա ք Ե ռ ո ւ թ յ ո ւ ն ի ց , ո ը ի փ ո փ ո խ ո ւ թ յ ա մ ք հ ն ա ռ ա վ ո ը Ե կ ա ռ գ ա վ ո ը Ե Լ մ ա կ ը ո ա ն ց ք Ե ռ ի չ ա փ Ե ռ ը , ո ը ն Ե Լ ի ը հ Ե ռ թ ի ն ա գ դ ո ւ մ Ե ք Ե տ ո ն ի թ ա փ ա ն ց Ե Լ ի ո ւ թ յ ա ն վ ը ա :

Օ դ ա յ ի ն խ ո ճ ո չ ն Ե ռ ը ք Ե տ ո ն ի մ Ե ջ ա ռ ա ջ ա ն ո ւ մ Ե ն ա ն ք ա վ ա ռ ա ը խ տ ա ց մ ա ն ա ը դ յ ո ւ ն ք ո ւ մ կ ա մ հ ա տ ո ւ կ տ Ե խ ն ո Լ ո գ ի ա կ ա ն գ ո ը ծ ո դ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ռ ի ա ը դ յ ո ւ ն ք ո ւ մ : Բ Ե տ ո ն ո ւ մ պ ա ը փ ա կ վ ա ծ օ դ ի ը ն դ հ ա ն ո ւ ը ծ ա վ ա Լ ը հ ա գ վ ա դ Ե պ Ե գ Ե ը ա գ ա ն ց ո ւ մ 5%-ը :

Գ Ե Լ ա յ ի ն ծ ա կ ո տ ի ն Ե ռ ը կ ա գ մ ո ւ մ Ե ն հ ի դ ը ը ա տ ա ց վ ա ծ ց Ե մ Ե ն տ ի (ց Ե մ Ե ն տ ա յ ի ն գ Ե Լ ի) ծ ա վ ա Լ ի մ ո տ ա վ ո ը ա պ Ե ս 28%-ը : Գ Ե Լ ա յ ի ն ա ն ց ք Ե ռ ի ծ ա վ ա Լ ը կ ա խ վ ա ծ չ Ե ջ ը ա ց Ե մ Ե ն տ ա յ ի ն խ ա ռ ն ո ւ ը դ ի ց , ա յ ս ա ն ց ք Ե ռ ը ց Ե մ Ե ն տ ա յ ի ն գ Ե Լ ի ա ն ք ա ժ ա ն Ե Լ ի մ ա ս ն Ե ն կ ա գ մ ո ւ մ : Դ ը ա ն ց չ ա փ Ե ռ ը (0,5-30 ն մ) հ ա մ Ե մ ա տ Ե Լ ի Ե ն ջ ը ի մ ո Լ Ե կ ո ւ Լ ի չ ա փ Ե ռ ի հ Ե տ , ի ն չ ի ա ը դ յ ո ւ ն ք ո ւ մ գ Ե Լ ա յ ի ն ա ն ց ք Ե ռ ո ւ մ ջ ո ւ ը ը ս ո վ ո ը ա կ ա ն հ Ե դ ո ւ կ վ ի ճ ա կ ո ւ մ չ Ե : Մ ա ս ն ա վ ո ը ա պ Ե ս , վ Ե ը ջ ի ն ի ս խ տ ո ւ թ յ ո ւ ն ը կ ա գ մ ո ւ մ Ե մ ի ն չ և $1,5q / u \text{ մ}^3$, ի ս կ ս ա ռ ց ա կ ա Լ մ ա ն ջ Ե ը մ ա ս տ ի ճ ա ն ը ց ա ծ ը Ե -70°C -ի ց [26]:

Կ ա խ վ ա ծ մ թ ն ո Լ ո ը տ ա յ ի ն ճ ն շ մ ա ն ն Ե ը ք ո ջ ո ւ ը ը կ Լ ա ն Ե Լ ո ւ և պ ա հ Ե Լ ո ւ ո ւ ն ա կ ո ւ թ յ ո ւ ն ի ց ` ա ն ց ք Ե ռ ը ք ա ժ ա ն վ ո ւ մ Ե ն `

- մ ա գ ա ն ո թ ա յ ի ն (ո ւ ն ա կ չ Ե ն պ ա հ Ե Լ ջ ո ւ ը ը ն ո ը մ ա Լ պ ա յ մ ա ն ն Ե ը ո ւ մ),
- ո չ մ ա գ ա ն ո թ ա յ ի ն (ո ւ ն ա կ Ե ն կ Լ ա ն Ե Լ և պ ա հ Ե Լ ջ ո ւ ը ը):

Մազանոթային անցքերը մեծ դեր են խաղում բետոնի ցրտադիմացկունության և ջրանթափանցելիության հարցում, այսինքն, որքան մազանոթային անցքերը քիչ են, այնքան քիչ ջուր կարող է կլանել բետոնը: Մազանոթային անցքերը ձևավորվում են քիմիապես չկապված, ջրով լցված տարածություններում: Դրանց ծավալը և շառավիղը մեծանում են բետոնային խառնուրդի ջրացեմենտային հարաբերության բարձրացմանը զուգընթաց: Երբ ջուր/ցեմենտ հարաբերությունը մեծ է 0,38-ից, մազանոթային ծակոտիներին առաջացումն անխուսափելի է (անցքերի մեծությունը 30 - 50 մկմ է): Մազանոթային ծակոտկենություն և մեծացման դեպքում նվազում է բետոնի ցրտադիմացկունությունը և ջրանթափանցելիությունը:

Ոչ մազանոթային անցքերը կլանում են ջուրը և պահում են իրենց մեջ:

Ելնելով արտադրական պահանջներին՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել բետոնի զանգվածի պաշտպանության մեխանիզմներ տարատեսակ ջրահագեցած միջավայրներում անխափան աշխատելու համար: Առաջարկվել է ներթափանցող ջրամեկուսիչ նյութի և սիլան/սիլոքսանային էմուլսիայի համատեղ կիրառությունը բետոնի պաշտպանության մեխանիզմ: Առաջարկվող մեխանիզմի արդյունավետությունը ստուգելու համար պետք է համեմատական փորձարկում կատարել այդ տեսակով պաշտպանված և չպաշտպանված բետոնե փորձանմուշները միջև [83]:

Ջրանթափանցելիության, ջրակլանման և ֆիլտրացիայի փորձարկումների ժամանակ ջուրն անցնում է մազանոթների, միկրոճաքերի և այլ թերությունների միջով, այսինքն

ջրաթափանցելի ու թյան գնահատումն իրենից
ենթադրում է հաղորդակից մազանոթների և
ծակոտիների գնահատում:

Բետոնի միկրոկառուցվածքը ձևավորվում է
երկարատև ամրացման ընթացքում:

Հասունացած բետոնի մեջ այն ներառում է՝

- ցեմենտի հատիկների մնացորդները,
- ցեմենտի հիդրատացման արդյունքում
ստացված ցեմենտաքարը,
- ծակոտիներ (մազանոթային և գելային):

Գելային ծակոտիներ - Ցեմենտի հատիկների
մնացորդները պատված են հիդրատացման
արդյունքում ստեղծված թաղանթով, որոնք
սերտաճելով ձևավորում են ցեմենտաքարի ամուր
կառուցվածքը: Այդ թաղանթների միջև առկա
փոխկապակցված տարածություններն իրենցից
ներկայացնում են մազանոթային ծակոտիներ:
Հիդրատացման արդյունքում ստեղծված
բյուրեղները, որոնք ցեմենտի հատիկների շուրջ
ձևավորում են թաղանթներ, ներառում են գելանման
և բյուրեղային բաղադրիչներ: Ընդ որում,
հիմնական դերը կատարում է հիդրոսիլիկատային
գելը, որը կազմում է միջինում դրանց ծավալի 75%-ը:
Հենց այդ գելով են պայմանավորվում ցեմենտաքարի
տեխնիկական հատկությունները: Բյուրեղային
բաղկացուցիչը բաղկացած է 0,1մկմ և ավելի չափերով
մասնիկներից, իսկ ամենախոշոր բյուրեղները՝
Ca(OH)
և հիդրոսուլիդնալյումինատը՝ նույնիսկ 1 մկմ:
Հաճախ իրավիճակը պարզեցնելու նպատակով
հիդրատացիոն բոլոր արտադրությունները
անվանվում են գել: Հիդրոսիլիկատների
մասնիկները սովորաբար պատված են ջրի շերտերով:
Այն կարող է սկսել ցնդել միայն ցածր
խոնավությունամբ (45%-ից ցածր) օդի մեջ՝ մազանոթների
ամբողջական չորացումից հետո: Գելի

խոնավությունը ամբողջութեամբ վերանում է, երբ շրջապատող միջավայրում խոնավությունը կազմում է 0%: Ընդ որում, գելի մասնիկները մոտենում են, որոշ մասնիկներ կարող են նույնիսկ քիմիապես սերտաճել: Սակայն սովորական շահագործման պայմաններում գելային անցքերը մեծ մասամբ կամ ամբողջութեամբ լցված են խոնավությամբ: Գելի մասնիկները իրար ձգում են ջրային ենթաշերտերի միջով՝ միջմուկեկուլային ձգողութեան հարաբերականորեն թույլ ուժերով: Սակայն քանի որ այդ մասնիկները հարյուրավոր անգամ փոքր են քան ցեմենտի հատիկները, ուստի դրանց միջև շփման կետերի քանակությունը բավականին բարձր է, որով պայմանավորվում են գելի ամրութեան մեծ արժեքները, որոնք հասնում են մինչև 120ՄՊա [92]: Սակայն, ցեմենտաքարի մեջ մազանոթային ծակոտիների առկայութեան պատճառով, սովորական բետոններն ունեն զգալիորեն ավելի փոքր ամրություն: Գելային ծակոտիները գտնվում են գելային մասնիկների միջև և լինում են 2-5 նմ: Հիմնականում դրանց քանակը գելում կազմում է 28% և ժամանակի ընթացքում չի փոխվում: Սովորական շահագործման պայմաններում դրանք լցված են լինում խոնավությամբ: Գելի ծակոտիները այնքան փոքր են, որ նրանցից յուրաքանչյուրի մեջ տեղավորվում է ընդամենը մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար ջրի մուկեկուլ, որոնք գտնվում են ադսորբցված վիճակում, ինչի պատճառով էլ գելային ծակոտիները ջրի համար անթափանցելի են [18]:

Մազանոթային ծակոտիներ - Մազանոթային ծակոտիները դասավորված են գելային թաղանթների միջև, որոնք պատում են ցեմենտի հատիկների մնացորդները: Դրանց չափերը տատանվում են 0,01մկմ-

ից մինչև 10մկմ, երբեմն՝ ավելի շատ: Այդպիսի չափերի ծակոտիներում մազանոթային ուժերը, որոնք ազդում են ջրի վրա, գերազանցում են ծանրության ուժերը, դրանց շնորհիվ մազանոթային ծակոտիները հեշտությամբ լցվում են ջրով, ջուրը մազանոթներով բարձրանում է վեր՝ ծանրության ուժին հակառակ: Մազանոթային ուժերն ավելանում են մազանոթների չափերի փոքրացմանը զուգահեռ: Բարակ մազանոթային համակարգերում ջուրը կարող է բարձրանալ մեծ բարձրությամբ՝ ծանրության ուժին հակառակ. օրինակ, գրունտներում 2-3մ: Բետոնի մեջ մազանոթներն ունեն փոփոխական հատույթ և ջրի բարձրացումը սահմանափակվում է դրանց առավելագույն չափերով: Այն կարող է կազմել մոտավորապես 0,5 մ: Մազանոթային անցքերը ձևավորվում են ջրի այն մասով, որը չի մտել քիմիական ռեակցիաների մեջ և չի լրացրել ձևավորված գելային անցքերը: Այդ իսկ պատճառով դրանց քանակությունը կախված է ցեմենտի նկատմամբ ջրի ավելցուկից, այսինքն $\frac{Q}{S}$ հարաբերությունից: $\frac{Q}{S}$ հարաբերության 0,3-0,35 պայմաններում մազանոթային անցքերն արդեն մեկամիս հետո ամբողջությամբ պատվում են գելով: Բայց սովորական $\frac{Q}{S}=0,4-0,7$ պարագայում դրանք գոյություն ունեն հասուն բետոնի կազմում: Մազանոթային անցքերի միջին մեծությունը գտնվում է 1-0,1մկմ սահմաններում: Այն փոքրանում է $\frac{Q}{S}$ հարաբերակցության նվազման և մեծանում բետոնի ամրացման ժամանակին զուգընթաց [77]:

Մազանոթային ծակոտիները բաժանվում են երկու դասի.

- միկրոմազանոթներ (մինչև 0,1մկմ), որոնք ունակ են օդից խոնավություն հավաքել և ամբողջությամբ դրանով լցվել: Այսինքն ինչքան ջրահագեցած է բետոնի շրջապատը,

այդքան դրամիկրոմագանոթները հագեցած են ջրով:

- մակրոմագանոթներ (0,1մկմ-ից ավել) որոնք լցվում են միայն ջրի հետանմիջական շփումից: Մագանոթային ծակոտիները գեմենտաքարի և բետոնի հիմնական թերուլթյուններն են: Դրանք նվազեցնում են բետոնի ամրուլթյունը, ինչպես նաև հանդիսանում են սառնակայունուլթյան նվազման հիմնական պատճառը: Բետոնի միջով ջրի ֆիլտրացիայի և այդ ճանապարհով դրամեջագրեսիվ միջավայրի ստեղծման հիմնական պատճառը մակրոմագանոթներն են: Միևնույն ժամանակ անհրաժեշտ հատկուլթյուններով բետոն ստանալու գործում ծակոտիները գլխավոր դերն են կատարում (առաջին հերթին Ձ/Ց հարաբերուլթյան փոփոխուլթյան հաշվին): Գլխավոր գործունը, որից կախված է բետոնում ծակոտիների ընդհանուր ծավալը, Ձ/Ց հարաբերուլթյունն է՝ ինչքան շատ է բետոնում գեմենտը, այդքան ավելի ջուր է քիմիապես կարողանում այն կապել, հետևաբար, ավելի քիչ ջուր է մնում, որից էլ առաջանում են ծակոտիները: Այդիսկ պատճառով ծակոտկենուլթյան հաշվման բանաձևերում կարևոր դեր է կատարում գեմենտի քանակը: Ժամանակի ընթացքում քիմիապես կապակցված ջրի ծավալն աճում է, հատկապես երբ բետոնը գտնվում է բավարար խոնավուլթյան պայմաններում: Ազատ գեմենտի հիդրատացման շնորհիվ բետոնի ծակոտկենուլթյունը նվազում է 10-15%-ով:

$$\delta = [(\Omega - c \cdot S) / 1000] \cdot 100\% \quad (3)$$

որտեղ՝

Ω - 1խմ բետոնում ջրի պարունակուլթյունն է, կգ/մ³,

S - 1խմ բետոնում գեմենտի պարունակուլթյունը, կգ/մ³,

Շ - քիմիապես կապակցված շրի մասնաբաժինը
որոշող գործակից, որը որպես կանոն կազմում է 0,15:

Բետոնի ծակոտկենուն թյունը հնարավոր է
որոշել նաև փորձարարական եղանակներով, որոնցից
ամենապարզը ջրակլանման որոշումն է: Այս
դեպքում հաշվի է առնվում, որ մազանոթային և
գելային ծակոտիներն ամբողջությամբ լցված են
ջրով: Սակայն միևնույն ժամանակ ծակոտիներում
կարող է ինչ-որ չափով օդ լինի, բացի դրանից կան
ծակոտիներ, որոնք լցված են օդով և դրանց մեջ չունի
չի լցվում: Սրա պատճառով էլ ջրակլանման
ընդհանուր ծավալը որոշ չափով փոքր է, քան
բետոնում առկա ծակոտիները: Ծատ ժամանակ այս
ծակոտկենուն թյունը անվանում են բաց
ծակոտկենուն թյուն, այսինքն այն ծավալը, որտեղ
հնարավոր է շրի ներթափանցումը:

Բետոնի միկրոկամուրջվածքը հիմնականում
ձևավորվում է դրա պատրաստումից մեկ ամիս հետո:
Եթե բետոնը շահագործվում է չոր պայմաններում,
ապա հիդրատացիան դադարում է դրա չորացման հետ
մեկտեղ, իսկ կամուրջվածքը մնում է անփոփոխ:
Խոնավ պայմաններում օգտագործվող կամ մեծ
կոնստրուկցիաներում, որտեղ խոնավությունը
երկար ժամանակ պահպանվում է, բետոնում
հիդրատացիան շարունակվում է բավականին երկար:
Այն կոնստրուկցիաներում, որոնք ենթարկվում են
պարբերաբար չորացման և խոնավացման,
հիդրատացիոն գործընթացը դադարում և
վերսկսվում է: Բետոնի հասունացման հետ
համընթաց տեղի ունեցող հիդրատացման
ռեակցիաների արդյունքում բետոնում առկա
ծակոտիները գնալով փակվում են: Այս
գործընթացների շնորհիվ բարելավվում են բետոնի
հատկությունները, հատկապես`
սառնակայնությունը և
անջրթափանցելիությունը:

Բետոնի ծակոտկենուն թյան որոշման համար
հիմնականում օգտագործվում է ստորև բերված
հավասարումը (4):

$$P = (1 - \rho_s / \rho_a) \cdot 100\%, (4)$$

որտեղ՝

P -բետոնի ծակոտկենությունը, ρ_s - բետոնի իրական խտությունը, որն իրենից ներկայացնում է բետոնում

առկա կարծր մասնիկների խտությունը,

ρ_a - բետոնի միջին խտությունն է. բետոնի այն խտությունը, որն իրմեջ ներա-

ռում է ն'կարծր մասնիկների, և՛բետոնում առկա ծակոտիներին ծավալները:

Թույլ խտացված բետոնում, բացի բնական ծակոտիներից, առաջանում են նաև հավելյալ ծակոտիներ 0,1-2մմ տրամագծով, որոնք կազմում են բետոնի ծավալի 2-3%-ը, երբեմն՝ հասնում մինչև 5-6%:

Գործնական խնդիրների համար բավարար է ծակոտկենության մոտավոր գնահատականը, որը կարելի է ստանալ ըստ ջրացմեկնային հարաբերության և հիդրատացման աստիճանի: Վերջինս կարելի է որոշել՝ ելնելով գեմեկնաքարում ազատ CaO-ի քանակից:

Բետոնի սառնակայնությունը համար կարևոր դեր են խաղում նաև կոնտրակցիոն ծակոտիները, որոնք առաջանում են գեմեկնային հիդրատացման արդյունքում՝ ընդհանուր ծավալի փոքրացման պատճառով: Այս ծակոտիների չափերը տատանվում են 30-50 նմ սահմաններում: 100գ գեմեկնային հիդրատացիայից առաջանում են 7-9սմ³ կոնտրակցիոն ծակոտիներ:

2.2 Առավել նպատակահարմար ներթափանցող ջրամեկուսացման հիմնավորում

Ցանկացած բետոնյա կոնստրուկցիա ունի ծակոտկեն կառուցվածք, ինչպես նաև մանր ճաքեր, որոնց միջոցով ջուրը կարողանում է ներթափանցել բետոնի խորքը և վնասել այն: Ներկայումս

կիրառվող ջրամեկուսացման եղանակները հիմնականում ունեն երկարակետային խնդիր: Օրինակ, փաթեթային ջրամեկուսացումը ժամանակի ընթացքում շերտատվում է և կորցնում իր մեկուսիչ հատկությունները, իսկ այն եղանակները, որտեղ օգտագործվում են բիտումային խառնուրդներ, բավականին աշխատատար են, նրանց մոտ 90% անհրաժեշտ է կիրառել ու ցանաջ տաքացնել և արագ քսել, քան ի որ մի քանի րոպեի ընթացքում ամրանում են: Երկարատև ու սովորական խառնուրդ ունենեցող հետո Դանիայում ստեղծվեց խառնուրդ, որն ապահովում է բետոնի անջրաթափանցելիությունը՝ ներթափանցելով բետոնի խորքը [28,63]: Գնալով այս եղանակը և այն տարածում է ձեռք բերում ամբողջ աշխարհում: Հիմնականում այս տիպի ջրամեկուսացման համակարգերն իրենցից ներկայացնում են չոր խառնուրդ, որը բաղկացած է հատուկ ցեմենտից, կվարցային ավազից և քիմիապես ակտիվ հավելանյութերից (**Նկ.2.1**):



Նկ.2.1 Ներթափանցող ջրամեկուսացնող խառնուրդի օրինակ


Խորը ներթափանցող ջրամեկուսացումն օգնում է և լուծել հիմնական խնդիրներին մեծ մասը, կարևորը

նյութի ընտրությունն է և մակերևույթի ճիշտ
 մշակումը: Բետոնի համար ներթափանցող
 ջրամեկուսացնող խառնուրդում հիմնականում
 օգտագործվում է միներալային կապակցանյութ և
 կվարցային ավազ՝ խոշորությունը 0,63մմ-ից փոքր:
 Կապակցանյութ և լցանյութի
 հարաբերակցությունը կազմում է 1: 1,5: Խառնուրդի
 պատրաստման համար օգտագործվող ջրի քանակը
 որոշվում է՝ ելնելով խառնուրդի
 շարժունակությունից, կախված կիրառման
 եղանակից: Քսելու եղանակով կիրառման դեպքում
 ջրացեմենտային հարաբերակցությունը
 հիմնականում կազմում է 0,45-0,5: Ներթափանցումն
 ապահովող հավելանյութերը կազմում են
 ընդհանուր կապակցանյութի 10%-ը: Օգտագործված
 նատրիումի աղերը (Na_2CO_3 , Na_2SO_4 , NaNO_3 , Li_2SO_4) կիրառվել են
 տարբեր հարաբերակցություններով՝ ելնելով
 մագանոթային նվազագույն ջրակլանման պայմանից
 [21, 27]:

Ռուս գիտնականների կողմից ներթափանցող
 ջրամեկուսիչ ստանալու նպատակով կատարված
 բազմաթիվ փորձերի արդյունքում ստացվել է, որ
 խառնուրդում բնական ցեոլիտի օպտիմալ
 պարունակությունը պետք է կազմի 5,5-7,5%, իսկ
 պորտլանդցեմենտի կազմում շլակի առկայության
 դեպքում՝ 22-25%: Այս հարաբերակցությունների
 դեպքում ջրակլանումը կազմում է 0,11-0,12 կգ/մ²: Այս
 երկու տարրերի միջև ռեակցիայի շնորհիվ
 առաջանում են հիդրոկրիստալներ և
 հիդրոլյումինատներ, որոնք գործնականում չեն
 լուծվում ջրում: Այս բյուրեղները բետոնյա
 կառուցվածքի ներսում ստեղծում են ամուր
 պաշտպանություն՝ ամրացնելով բետոնի
 հյուսվածքները [61,82]:

Ներթափանցելով ծակոտիների մեջ՝ խառնուրդի մասնիկներն ավելացնում են բետոնում ձևավորվող հիդրատային ֆազաների քանակը՝ այդիսկ եղանակով խտացնելով բետոնը: Քիմիապես ակտիվ նյութերը ռեակցիայի մեջ են մտնում բետոնում պարունակվող ալյումինի, կալցիումի և տարբեր աղերի հետ՝ առաջացնում ավելի բարդ քիմիական միացություններ՝ աղեր, որոնք ջրի հետ միանալուց հետո ստեղծում են անլուծելի, քառօրյա տեղաբաշխված ասեղնաձև բյուրեղահիդրատներ (**ՆԿ. 2.2**): Այս կրիստալները փակում են ծակոտիները, մազանոթները և մինչև 0.4մմ լայնությամբ ճաքերը: Ընդ որում, կրիստալները դառնում են բետոնի բաղկացուցիչ մասը ոչ միայն բարձրացնելով բետոնի ջրադիմացկունությունը, այլ նաև բարելավելով մի շարք մեխանիկական հատկություններ: Այս տիպի նյութերի դրական առանձնահատկություններից մեկն այն է, որ կանխարգելում է ջրի ներթափանցումը ինչպես դրական, այնպես էլ բացասական ճնշումների դեպքում [59,62]:

Քանի որ այս խառնուրդները ներծծվում են բետոնի մեջ, այն բավականին հարմար է թունելային երեսարկների համար, քանզի երեսարկի արտաքին մասից մոտեցման հնարավորություն չի լինում: Ջրամեկուսացման մնացած բոլոր եղանակներից հիմնական տարբերությունը կայանում է այս հատկության մեջ [11]:



Նկ.2.2 Ռեակցիաների արդյունքում առաջացած ասեղնաձև բյուրեղահիդրատներ

Ներթափանցող ջրամեկուսացման կիրառման առաջին քայլը հանդիսանում է ջրամեկուսացվող մակերևույթի մշակումը: Մշակումը կարող է իրականացվել կա՛մ մեխանիկական, կա՛մ էլ քիմիական եղանակով: Անկախ մշակման եղանակից՝ անհրաժեշտ է բետոնի մակերևույթը մաքրել նստվածքներից, յուղերից որոնք կարող են խոչընդոտել խառնուրդի ներթափանցմանը: Մեխանիկական մաքրման դեպքում կարելի է օգտագործել երկաթյա խոզանակ, որը կարելի է ամրացնել գայլիկոնի կամ այլ սարքավորման վրա՝ մաքրման գործընթացը հեշտացնելու համար: Ավելի հեշտեղանակ է բարձր ճնշման տակ ջրային շիթով մաքրումը, որը բավականին արագ և արդյունավետ կարող է մաքրել բետոնյա մակերևույթի մեծ ծավալներ: Այս եղանակի դեպքում անհրաժեշտ է խստորեն հետևել անվտանգության տեխնիկային՝ օգտագործելով հատուկ հանդերձանք և դիմակ: Քիմիական եղանակի դեպքում օգտագործվում են հատուկ քիմիական խառնուրդներ, որոնք քայքայում են բետոնի մակերևույթի անպետք մասերը՝ ապահովելով ջրամեկուսացնող նյութի անարգել ներթափանցումը: Այս բոլոր եղանակներից

ամենահեշտ, արդյունավետ և տնտեսապես շահավետ հանդիսանում է մեխանիկական մաքրումը: Քիմիական եղանակի դեպքում պետք է ձեռք բերել լուծույթներ, որոնք այնքան էլ էժան չեն [75]:

Երկրորդ կարևոր քայլը հանդիսանում է մշակվող մակերևույթի հագեցումը ջրով: Այս քայլը բավական կարևոր է, քանի որ բետոնի ջրահագեցվածությունից է կախված, թե ինչքան խորը կներծծվի ջրամեկուսիչ նյութը: Անհրաժեշտ է, որ մեկ մ² ներծծի 5 լիտրից ոչ պակաս ջուր: Այս գործընթացը պետք է անել մի քանի մոտեցումով, այսինքն խոնավացնել մակերևույթը, սպասել մինչև բետոնը կներծծի ջուրը և կրկնել այդ ամենը մի քանի անգամ:

Վերջնական փուլը խառնուրդի քսումն է ջրամեկուսացվող մակերևույթին: Խառնուրդը պատրաստելու ժամանակ պետք է հաշվի առնել այն փաստը, որ արդեն պատրաստի խառնուրդը կարելի է օգտագործել 30 րոպեի ընթացքում: Պատրաստի խառնուրդին, որը չի իրացվել, արգելվում է ավելացնել ջուր: Խառնուրդի պատրաստման օպտիմալ ջերմաստիճանը 20°C, ավելի ցածր ջերմաստիճանի դեպքում խառնուրդի ամրացման ժամանակը մեծանում է, իսկ բարձր ջերմաստիճանի դեպքում՝ հակառակը: Խառնուրդը պատրաստվում է շաղախին ջուր ավելացնելու միջոցով՝ մեկ կիլոգրամին 0,4 ջուր հաշվարկով: Ստացված խառնուրդն անհրաժեշտ է մեկից երկու րոպե խառնել ձեռքով՝ մինչև ստացվի համասեռ զանգված: Օգտագործման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար խառնել, որպեսզի պահպանվի առաջնային վիճակը: Խառնուրդը բավականին զգայուն է ցածր ջերմաստիճանների նկատմամբ, քանզի այն բերում է բետոնի և ներթափանցող նյութի միջև տեղի ունեցող ռեակցիաների

դանդադեցման, կիրառման համար օդի օպտիմալ ջերմաստիճանը պետք է 5°C-ից բարձր լինի: Խառնուրդը կիրառվում է կա՛մ վրձիկով քսելով օգնություն, կա՛մ էլ փչելով եղանակով: Որակյալ ջրամեկուսացում ստանալու համար անհրաժեշտ է խառնուրդը քսել երկու շերտով: Բետոնի մակերևույթին քսվող խառնուրդի ընդհանուր հաստությունը պետք է կազմի 1.5-2մմ: Առաջին շերտը քսվում է խոնավ բետոնի վրա, կոշտ սպունգի կամ խոզանակի օգնությամբ: Երկրորդ շերտը պետք է քսել արդեն փոքր ինչ ամրացած և նախապես խոնավեցված առաջին շերտի վրա: Չոր շաղախի ծախսը կազմում է 0,8-1,1 կգ/մ²՝ կախված մակերևույթի խորդոլբորդոլթյունից: Եթե ամբողջ գործընթացը իրականացված է՝ պահպանելով տեխնոլոգիական բոլոր պահանջները, ապա բետոնը կարող է անջրաթափանց դառնալ մինչև 400մմ հաստությամբ: Բացի այդ, բարձրանում է նաև բետոնի սառցակայունությունը և ամրությունը [24,51,90]:

Ընդհանրապես, կախված առաջադրված խնդրից, նմանատիպ նյութերն ըստ նշանակության բաժանվում են մի քանի տեսակների, որոնցում տարբերվում են բաղկացուցիչ մասեր կազմող քիմիական և միներալային մասնիկների քանակությունը:

Ներթափանցող ջրամեկուսիչ նյութեր

Տեխնիկական տվյալներ	Պատրաստող կազմակերպությունը		
	ICS/Penatron International Ltd, ԱՄՆ	Vandex International Ltd, Շվեյցարիա	XYPEX CHEMICAL, Կանադա
	Տարբեր խնդիրներին համար առաջարկվող խառնուրդներ		
	Penatron, Peneplug, Penetron	Vandex Super, Vandex Plug,	Concentrate, Patch and Plug Ultra Plug
Խառնուրդի բաղադրությունը	Կոշտ բաղադրիչ :ջ ու ր 3:(1,5+2,0)	Կոշտ բաղադրիչ :ջ ու ր 2:0,8	Կոշտ բաղադրիչ :ջ ու ր (5:2 կամ 5:3)
1մ², կգ-ի համար ծախսը	1,35+1,62	0,75+1,5	1,45-1,60
Ճածկման հաստությունը, մմ	1,25+2,0	1,5+3,0	1,25
Քսելուլոզեղանակը	Վրձինով կամ փոշարարով		
Քիմիապես ազդեցիկ միջավայրին կատմամբ դիմացկունությունը	Ազդեցիկ գրունտային ջրերի, կարբոնատների, ,սուլֆատների, քլորիդների նկատմամբ	Ծովային ջրի և ազդեցիկ գրունտային ջրերի, որոշ քիմիական լուծույթների նկատմամբ	Ազդեցիկ գրունտային ջրերի, կարբոնատների, ,քլորիդների, սուլֆատների նկատմամբ
Ցրտադիմացկունություն	Բարձրացնում է 18%-ով	Բարձրացնում է	Բարձրացնում է
Ամրությունը	Բարձրացնում է 1-2%	Բարձրացնում է 1,5-2,5%-ով	Բարձրացնում է 1,5%-ով
Ներթափանցման խորությունը, (սմ)	40	Տվյալներ չկան	20-30

Ամրացման ժամկետները	30 րոպե	20 րոպե	25 րոպե
Կիրառման ջերմաստիճանը	5°C և ավելի	5°C և ավելի	5°C և ավելի

Քանի որ այս տիպի շրամեկուսացումը բավականին թանկ արժեք, ռուսական ընկերությունները մշակեցին իրենց ներթափանցող շրամեկուսացման նյութերը, որոնք հիմնական բաղադրիչներով համընկնում են, սակայն գնային առումով բավականին էժան են՝ համեմատ արևմտյան տարբերակների: Այժմ գոյություն ունեն մի քանի հիմնական ընկերություններ, որոնք զբաղվում են նմանատիպ նյութերի արտադրությունամբ: Փորձենք կատարել տեխնիկական տվյալների համեմատություն (Աղյուսակ 2.1):

Ներթափանցող շրամեկուսացման խառնուրդները հիմնականում մոխրագույն, չոր խառնուրդներ են, որոնք բաղկացած են պորտլանդցեմենտից, կվարցային ավազից և քիմիական հավելանյութերից [82]:

Այս նյութերի դրական կողմերն են

1. Տոքսիկ չեն և չեն առաջացնում ալերգիկ ռեակցիաներ:
2. Դիմանում են բավականին մեծ ճնշումների:
3. Ջրամեկուսացումը ապահովելու հետ համատեղ չեն խանգարում գազային մասնիկների տեղաշարժին:
4. Ավելացնում են բետոնի սառցակայունությունը և ամրությունը:
5. Կարելի է օգտագործել գրեթե բոլոր կլիմայական գոտիներում:

Դրական ազդեցության հետ համատեղ կարող են առաջ գալ խնդիրներ՝ նյութի սխալ կիրառման պատճառով, մասնավորապես, ոչ բավարար ներթափանցման: Անհրաժեշտ է նշել, որ այս տիպի շրամեկուսացումը չի կարելի օգտագործել W2 և ցածր շրաթափանցելիություն ունեցող բետոնների դեպքում, հին և արդեն քայքայված բետոնների դեպքում:

Խառնուրդի ներարկման դեպքում նույնպես ստացվում է բավական լավ արդյունք, սակայն ձեռքով ներարկելն անհնար է, դրա համար անհրաժեշտ են վերապատրաստված վարպետներ՝ հատուկ սարքավորումներով: Բացասական կողմերից է հանդիսանում նաև այս տիպի նյութերի գինը, սակայն հարկավոր է նշել, որ որակյալ ջրամեկուսացումն անխափան աշխատանքի և երկարակեցության գրավականն է: Ներթափանցող ջրամեկուսացումը չի ենթարկվում մեխանիկական մաշվածության, քանի որ ջրամեկուսիչ հատկությունամբ արդեն իսկ օժտված է բետոնը: Ջրամեկուսացման կյանքի տևողությունը հավասար է բետոնի տևողությանը, իսկ ջրամեկուսացման շնորհիվ բետոնի երկարակեցությունը մեծանում է: Ներթափանցող ջրամեկուսացման մեկ այլ հատկանշական առավելությունն է բետոնի ինքնավերականգնումը: Ծահագործման ընթացքում անխուսափելի են բետոնյա կոնստրուկցիայում մանր ճաքերի առաջացումը: Քիմիապես ակտիվ բաղադրիչների շնորհիվ մինչև 0.5մմ հաստությամբ ճաքերը կարող են լցվել ջրի և քիմիական նյութերի ռեակցիայից առաջացող բյուրեղներով:

Ներթափանցող ջրամեկուսացման կիրառությունը չի ազդում բետոնի հիմնական ֆիզիկական հատկությունների՝ շարժունակության, ամրացման ժամանակի և այլնի վրա:

2.3 Առաջարկվող ներթափանցող ջրամեկուսիչ շաղախի համար որպես նուծիչ սիլիկատային հիմքով

հեղուկների համեմատությամբ

Ժամանակակից շինարարության մեջ լայն կիրառություն են գտել սիլիկատային (սիլիցիոնումային) հիմքով ջրամեկուսիչները:

Դրանք դիսպերսված նյութ են, որոնց բնորոշ է մշակվող մակերևույթի մեջ ներթափանցելը և այդ մակերևույթին ջրամերժ հատկություններ հաղորդելու ունակությունը: Սիլիկատային հիմքով ջրամեկուսիչները հիմնականում բաժանվում են երկու խմբի. ըստ ակտիվ նյութերի գտնվելու միջավայրի՝ ջրային հիմքով և այլ լուծիչի մեջ դիսպերսված [30,67,81]:

Քանի որ սիլիկատային հիմք ունեցող քիմիական միացությունները բավականին շատ են և բարդ, ծանոթանանք դրանց հիմնական մասին, որոնք առնչվում են շինարարության հետ, և ինչպես կարող են սիլիցիումի տարբեր միացությունները կիրառվել խառնուրդներում, որպեսզի կատարելագործեն շինարարական նյութերը:

Սիլան - Մոլեկուլ է, կազմված մեկ կենտրոնական սիլիցիումի ատոմից և նրան միացած ջրածնային չորս խմբերից ($\text{SiH}_2\text{n}+2$): Կարող է միացած լինել ցանկացած օրգանական կամ անօրգանական համադրության:

Սիլանների տարատեսակ են ալկոկսիլանները ալկիլային խմբերի հետ միացություններում իրենցից ներկայացնում են բետոնի համար արդյունավետ ջրամեկուսիչ [39,54]:

Սիլիկոն կամ Սիլօքսան - Օլիգոմեր կամ պոլիմերային միացություն է, որը կազմված է կրկնվող Si-O-ից: Լինելով կայուն ու լիտրամանուշակագույն ալիքների, տաքության և թթվայնացուցիչների նկատմամբ:

Սիլօքսանները հեղուկներ են օրգանական սիլիցիումի պոլիմերներից, որոնք ունեն ցածր մածուցիկություն: Սիլօքսանի

մածուցիկությունը մեծանում է պոլիմերի մոլեկուլային զանգվածի մեծացման հետ գույնի փոփոխում:

ՍԻԼԻԿՈՆԱՅԻՆ ԷՄՈԼԼՍԻԱ - Որպես կանոն սիլիկոնային պոլիմերն օգտագործվում է էմոլլսիայի տեսքով՝ ջրային հիմքով: Տվյալ էմոլլսիաները կարող են պարունակել մի քանի բաղադրիչներ:

Էմոլլսիայի տեսնունդիան թույլ է տալիս օգտագործել ջրային հիմքով խառնուրդներ տարբեր տիպի բաղադրիչներով, որոնց կիրառման համար անհրաժեշտ կլինեին լուծիչներ, քանզի բարձր խտությամբ պատճառով կունենան ցածր արդյունավետություն [93]:

ՍԻԼԻԿՈՆԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ - Մի քանի բաղադրիչների խառնուրդ է, որը նախատեսված է կոնկրետ նպատակի համար: Առավելությունն այն է, որ որպես հիմք օգտագործվում է մի քանի բաղադրիչներից խառնուրդ, այսինքն ստացված նյութը պարունակում է մեկ տիպից ավել բաղադրիչ: Օրինակ, քիմիապես ակտիվ և ներթափանցման հատկություն ունեցող սիլանը կարող է միացված լինել շարժուն և ջրամերժ սիլօքսանի հետ: Խառնուրդները կարող են պատրաստվել ինչպես ջրի կամ այլ լուծիչի հիման վրա, այնպես էլ կարող են հանդես գալ փոշու տեսքով [30]:

Սիլիցիումի օրգանական միացությունները լայնորեն կիրառվում են շինարարությունում՝ բետոնին տալով ջրամեկուսիչ, սառցադիմացկուն և կոռոզիայի նկատմամբ կայունացնող հատկություններ, ինչպես նաև բետոնային խառնուրդի համար որպես պլաստիֆիկատոր: Այսպիսի նպատակների համար օգտագործվում են պոլիօրգանոսիլիկատներ՝ հեղուկներ, հիմնային մետաղների ալկիլսիլիկատներ, խեժեր և այլն: Այս նյութերը երկարացնում են շինարարական նյութերի երկարակեցությունը, իջեցնում են շահագործման ծախսերը:

Սիլիցիոնումի օրգանական միացությունները ուղեկցվում են ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական արդյունավետությամբ, ինչը հանգեցնում է շինարարական ոլորտում իրացման ծավալի մեծացմանը: 1967 թ. շինարարությունում օգտագործվում էր արտադրվող սիլիցիոնումի օրգանական միացությունների ընդամենը 10%-ը, 1970թ. այդ թիվը հասավ 25%-ի, իսկ 1975-ին կազմեց 35% [74]:

Արտաքին միջավայրի ազդեցիվ ազդեցության տակ ժամանակի ընթացքում բետոնի տեխնիկական բնութագիրը փոխվում է դեպի վատը: Բետոնի կայունությունը ազդեցիվ միջավայրի նկատմամբ կարելի է բարձրացել տարատեսակ հավելանյութերի կիրառմամբ: Ժամանակակից շինարարության մեջ բետոնի արտադրության ժամանակ ավելացվում են նյութեր, որոնք բարձրացնում են բետոնի կայունությունը տարբեր գործոնների նկատմամբ: Դրանցից կարելի է նշել պլաստիֆիկացնող և գազագոյացնող նյութերը, որոնք իջեցնում են խառնուրդի ջրապահանջը, ինչպես նաև ստեղծվում է ծակոտիների փակ համակարգ, որը բարձրացնում է բետոնի անջրաթափանցելիությունը: Առավել արդյունավետ ջրամերժ, գազագոյացնող և պլաստիֆիկացնող հավելանյութերից են սիլիցիոնումի օրգանական միացությունները: Բետոնի արտադրություն տեխնոլոգիայում դրանց արդյունավետությունը հիմնված է ցեմենտային շաղախի մեջ հայտնվելուց հետո տեղի ունեցող քիմիական գործընթացների վրա: Սիլիցիոնումի օրգանական և ոչ օրգանական միացությունների համադրության ժամանակ ոչ օրգանական միացությունների ակտիվ խմբերը փոխազդում են սիլոկսանների ակտիվ ֆունկցիոնալ խմբերի հետ: Բետոնում այսպիսի փոխազդեցություն տեղի է

ն ւ ն ե ն ու մ ց ե մ ե ն տի հ ի դ ը ր ա տ ա գ մ ա ն ժ ա մ ա ն ա կ ՝
կ ալ ց ի ու մ ի օ ք ս ի դ ի հ ի դ ը ր ա տ ի առ ա ջ ա գ մ ա մ ք [30, 76]:

Ս ի լ ի ց ի ու մ ի օ ր գ ա ն ա կ ա ն մ ի ա գ ու թ յ ու ն ն եր ը ,
Ֆ ի ք ս վ ե լ ո վ ն յ ու թ ի մ ա կ եր ն ու յ թ ի ն ,
հ ի դ ը ր ո Ֆ ո ք ի գ ա գ ն ու մ ե ն ծ ա կ ո տ ի ն եր ի և
մ ա գ ա ն ո թ ն եր ի պ ա տ եր ը : Ա յ ս հ ա ն գ ա մ ա ն ք ը
դ ը ր ա կ ա ն ո ը ե ն է ա գ դ ու մ ք ե տ ո ն ի
ս առ ց ա կ ա յ ու ն ու թ յ ա ն վ ը ա , ք ա ն գ ի ս առ ու յ ց ի և
աղ եր ի ք յ ու ը ը ն եր ի ա դ հ ե գ ի ա ն ծ ա կ ո տ ի ն եր ի
ջ ը ա մ եր ժ մ ա կ եր ն ու յ թ ի վ ը ա ն վ ա գ ու մ է : Ջ ը ա ծ ն ի
առ ա ջ ա գ ու մ ն ու ղ ե կ ց վ ու մ է փ ա կ ծ ա կ ո տ ի ն եր ի
ս տ ե ղ ծ մ ա մ ք , ա յ ս գ ո ը ծ ը ն թ ա գ ի ճ ի շ տ կ առ ա վ ա ը մ ա ն
դ ե պ ք ու մ կ ա ը ե լ ի է ս տ ա ն ալ ք ե տ ո ն ի մ ա ն ը
ծ ա կ ո տ ի ն եր ո վ հ ա գ ե գ ա ծ կ առ ու ց վ ա ծ ք , ի ն չ ը
դ ը ր ա կ ա ն ո ը ե ն է ա գ դ ու մ ք ե տ ո ն ի եր կ ա ը ա կ ե ց ու թ յ ո ն
վ ը ա :

Ո ը պ ե ս ք ե տ ո ն ի ս առ ց ա կ ա յ ու ն ու թ յ ա ն
չ ա փ ո ը ը շ ի չ ը ն դ ու ն վ ու մ է ս առ ե գ մ ա ն և հ ալ ե գ մ ա ն
ց ի կ լ եր ի ք ա ն ա կ ը , ո ը ի ա ը դ յ ու ն ք ու մ ճ կ ու ն ու թ յ ա ն
դ ի ն ա մ ի կ ա կ ա ն մ ո դ ու լ ը ն վ ա գ ու մ է մ ո տ 25%-ո վ :
Ի ն չ ք ա ն շ ա տ ց ի կ լ եր ի է դ ի մ ա ն ու մ ք ե տ ո ն ը , ա յ ն ք ա ն
ա վ ե լ ի ս առ ց ա կ ա յ ու ն է հ ա մ ա ը վ ու մ : Ս ի լ ի ց ի ու մ ի
օ ր գ ա ն ա կ ա ն հ ե ղ ու կ ն եր ի (ս ի լ ո կ ս ա ն ի պ ո լ ի հ ի դ ը ր ա տ
կ ա մ ն ա տ ը ի ու մ ի ս ի լ ի կ ո ն ա տ) կ ի ը առ մ ա մ ք հ ն ա ը ա վ ո ը
է գ գ ալ ի ո ը ե ն ք ա ը ձ ը ա գ ն ե լ ք ե տ ո ն ի
ս առ ց ա կ ա յ ու ն ու թ յ ու ն ը :

Ք ե տ ո ն ի ջ ը ա- և ս առ ց ա կ ա յ ու ն ու թ յ ա ն
ք ա ը ձ ը ա գ մ ա ն հ ա մ ա ը խ առ ն ու ը ը դ ու մ ա վ ե լ ա գ ն ու մ ե ն
ս ի լ ի ց ի ու մ ի օ ր գ ա ն ա կ ա ն մ ի ա գ ու թ յ ու ն ն եր , ո ը ո ն ք
ս ի լ ի ց ի ու մ ի ա տ ո մ ի հ ե տ ա կ տ ի վ ջ ը ա ծ ի ն ե ն
պ ա ը ու ն ա կ ու մ : Պ ո լ ի մ եր ն ա վ ե լ ա գ ն ու մ ե ն
է մ ու լ ս ի ա յ ի , փ ո շ ու կ ա մ ս ու ս պ ե ն գ ի ա յ ի տ ե ս ք ո վ :
Փ ո շ ու կ ա մ պ ո լ ի մ եր ի ս ու ս պ ե ն գ ի ա յ ի կ ի ը առ ու մ ը
դ ա ն դ աղ ե ց ն ու մ է ք ե տ ո ն ի ա մ ը ա գ մ ա ն ժ ա մ ա ն ա կ ը ,
ա մ ը ա գ մ ա ն դ ա ն դ աղ ե ց մ ա ն է ք ե ը ու մ ն ա ն

պուլիմերների մեծ քանակի օգտագործումը, որի պատճառով բետոնը իր ամբողջական ամրությունը ձեռք է բերում 6-9 ամիսների ընթացքում: Այս տղանակով ստացված բետոնները աչքի են ընկնում իրենց բարձր անջրաթափանցելիությամբ, թթուների, հիմքերի և սուլֆատների հանդեպ կայունությամբ:

Բետոնի երկարակեցությունն ապահովվում է նրա բաղադրության մեջ մտնող պուլիմերների համակարգ ազդեցությամբ: *Առաջինը* բետոնի մանր ծակոտկեն կառուցվածքի ստեղծմամբ Si-H-ից ջրածնի անջատումն է և նատրիումի ալյումոսիլիկատների ու սիլիկոնատների օգտագործման դեպքում ռեակցիայի մեջ օդի ներգրավումը: *Երկրորդը* ծակոտիների և մազանոթների պատերին պուլիօրգանական սիլիկատների ադսորբցիան է, որը բետոնին տալիս է անջրաթափանց հատկություն:

Ջրամեկուսիչ հատկություններով են օժտված նաև սիլան/սիլօքսանային էմուլսիաները, որոնք իրենցից ներկայացնում են առաջին սերի էմուլսիա: Էմուլսիայի հիմքն իրենից ներկայացնում է պուլիօրգանոսիլօքսանների և սիլանի խառնուրդ, իսկ որպես էմուլգատոր օգտագործվել են ոչ իոնազեն, մակերևութային ակտիվ նյութեր: Տվյալ էմուլսիաները նախատեսված են ինչպես նոր պատրաստվող բետոնի անջրաթափանցելիության ապահովման նպատակով՝ խառնուրդում օգտագործվող ջրի մեջ ավելացնելով էմուլսիան, այնպես էլ բետոնի արտաքին մակերևույթի հիդրոֆոբիզացման համար:

Կիրառումից առաջ խորհուրդ է տրվում խառնել, քանզի հնարավոր է էմուլսիայի բաղադրիչների շերտավորում [25,27]:

Բետոնի պատրաստման ընթացքում ջրի հետ խառնելու տոկոսային հարաբերակցությունը կազմում է 0,3%-ից մինչև 2%՝ կախված օգտագործվող

ցեմենտի քաշից: Մակերևույթային պաշտպանության համար, կախված ծակոտկենության չափից, խորհուրդ է տրվում էմուլսիան խառնել 1: 2-ից մինչև 1: 9 հարաբերության մեջ: Թարմ բետոնի համար խորհուրդ է տրվում մշակումն իրականացնել բետոնի պատրաստումից 42 ամիս հետո: Բետոնի պատրաստման ընթացքում էմուլսիայի կիրառումը նվազեցնում է կոնստրուկցիայի ջրակլանումը 2-5 անգամ և զգալիորեն բարձրանում է սառցակայունությունը:

Մշակումից առաջ անհրաժեշտ է կոնստրուկցիայի մակերևույթը մաքրել փոշուց, աղտոտվածություններից և յուղային հետքերից: Խառնուրդը քսվում է վրձինով կամ ճնշման տակ փչելով, մի քանի շերտով, հաջորդ շերտը քսում են նախորդի չորանալուց առաջ, նվազագույնը 100գ/մ² ծախսով: Ջրամերժ հատկությունների վերջնական ձևավորումը տեղի է ունենում մակերևույթի մշակումից 7-14 օրվա ընթացքում՝ կախված մշակվող մակերևույթից և չորացման պայմաններից [43]:

Փորձերը կատարվել են փոշենման խառնուրդների և օրգանական սիլիցիումային էմուլսիայի արդյունավետության նկատմամբ համեմատելու համար:

Փորձի ընթացքում փոշենման խառնուրդն ավելացվել է ցեմենտին, որից հետո ավելացվել է ջուրը, մանրակրկիտ խառնվել և պատրաստվել են խորանադներ: Էմուլսիաները խառնվել են ջրի հետ, որի օգտագործմամբ ևս պատրաստվել է բետոնային խառնուրդ [13]: Խորանադները պատրաստելուց 28 օր հետո փորձարկվել են՝ ջրակլանման մակարդակի ստուգման նպատակով: Ջրակլանումը որոշվել է կշռելու միջոցով՝ խորանադները 24 ժամ ջրի մեջ պահելուց հետո: Ստացված արդյունքները բերված են աղյուսակ 2.2-ում:

**Ջրամեկուսիչից կախված փորձանմուշի
չրակլանումը**

No№	Հիդրոֆոբիզատորի բաղադրությունը	Յ/Ց*, %	ՉԿ, %
1.	Օրգանական սիլիցիոնումի	0,5	4,9
	փոշենման	2,0	1,4
	հիդրոֆոբիզատոր	2,0	1,0
2.	Ջրային հիմքով օրգանական սիլիցիոնումի 60%-անոց էմուլզատորով էմուլսիա	1,67	5,9
3.	Պոլիօրգանոսիլօքսաններ	1,67	1,1
	րիևսիլանային էմուլսիա	1,67	1,1
4.	Առանց հիդրոֆոբիզատորի	---	7,5 8,0

* - էմուլսիայի կամ փոշենման հիդրոֆոբիզատորի և
ցեմենտի հարաբերակցությունը՝ Յ/Ց

Ստացված արդյունքներից երևում է, որ
պոլիօրգանոսիլօքսանների և սիլանային
էմուլսիան ունի ավելի բարձր
արդյունավետություն՝ համեմատած փոշենման
խառնուրդների հետ [78]:

Փորձարկումների համար նախատեսված բետոնի
կազմը ներկայացված է աղյուսակ 2.3-ում

Փորձանմուշների բաղադրիչների կազմը

Բաղադրիչ	Մակնիշ	Քանակ	Նշումներ
----------	--------	-------	----------

Ավազ	0-4մ մ	829 կ գ /մ ³	-
Լ ց ա ն յ ու թ	4-8մ մ	368 կ գ /մ ³	-
Լ ց ա ն յ ու թ	8-16մ մ	645 կ գ /մ ³	-
Պոքտլ անդգեմ ենտ	CEM1	350 կ գ /մ ³	-
Ջ ու ը	-	175 կ գ /մ ³	-
Սիլիկոնային էմուլսիա	-	10,5	3% ցեմենտի քաշից, 0,44% բետոնի քաշից

Թարմ բետոնի հատկությունները գետեղված են աղյուսակ 2.4-ում:

Աղյուսակ 2.4

**Էմուլսիայի հավելումով և սովորական բետոնի
մեխանիկական հատկությունները**

Նմուշ	Նստվածք, սմ	Օդի պարունակու թյուն, %	Խտություն լն, կգ/մ ³
Էմուլսիայի հավելումով բետոն	39,5	2,8	2373
Սովորական բետոն	36	3,2	2383

Էմուլսիայի հավելումով և առանց
հավելումների բետոնների ջրակլանման
գործակիցները բերված են աղյուսակ 2.5-ում:

Աղյուսակ 2.5

**Էմուլսիայի հավելումով և սովորական բետոնի
ջրակլանման գործակիցը**

Նմուշ	Ջրակլանման գործակից, %
Էմուլսիայի հավելումով բետոն	0,084
Սովորական բետոն	1,31

Կատարվել են փորձեր բետոնային խառնուրդի մեջ սիլիկոնային էմուլսիայի տարբեր հարաբերությունների օգտագործմամբ: Ստացված բետոնի ֆիզիկամեխանիկական հատկությունները ներկայացված են աղյուսակ 2.6-ում:

Իրականացված փորձերից երևում է, որ սիլիկոնային էմուլսիաները բարձրացնում են անջրաթափանցելիությունը երկու մակնիշով, իսկ ջրակլանումը նվազեցնում 1,4-1,8անգամ [93]:

